

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

2020 թվականի _____ -ի

«ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

N _____ - Ա

ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 32-րդ կետով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հավանություն տալ «Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծին:

2. Արցախի Հանրապետության Ազգային ժողովում «Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը քննարկելիս Արցախի Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ նշանակել Արցախի Հանրապետության արդարադատության նախարար Արարատ Դանիելյանին:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020 թվականի _____

ք. Ստեփանակերտ

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2013 թվականի ապրիլի 25-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 218-րդ և 219-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենսգրքի 216-րդ հոդվածի 5-րդ մասի «216-րդ, 217-րդ, 218-րդ և 219-րդ» բառերը փոխարինել «216-րդ և 217-րդ» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 216. Ակցիզային դրոշմանիշներ և հսկիչ նշաններ (դրոշմապիտակներ) կեղծելը կամ իրացնելը

1. Ակցիզային դրոշմանիշներ և հսկիչ նշաններ (դրոշմապիտակներ) կեղծելը կամ կեղծ
ակցիզային դրոշմանիշներ և հսկիչ նշաններ (դրոշմապիտակներ) իրացնելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից
հազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է խոշոր չափերով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից
երեքհազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է
պատասխանատու անձի կողմից՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից
երեքհազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի
ժամկետով:

4. Սույն հոդվածում խոշոր չափ է համարվում հինգ հարյուր հատից ավելի ակցիզային
դրոշմանիշներ և հսկիչ նշաններ (դրոշմապիտակներ) կեղծելը կամ իրացնելը:

5. Սույն օրենսգրքի ~~216-րդ, 217-րդ, 218-րդ և 219-րդ~~ **216-րդ և 217-րդ** հոդվածներով
նախատեսված պատասխանատու անձ է համարվում օրենսդրությամբ սահմանված կարգով
տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ղեկավարման կամ կազմակերպման
լիազորություն ունեցող անձը, որը ենթակա է քրեական պատասխանատվության նշված
հոդվածներով նախատեսված արարքների կատարման համար՝ անկախ խախտման
սահմանային չափից:

Հոդված 218. Ակցիզային դրոշմանիշներով և հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորման ենթակա չդրոշմավորված կամ չվերադրոշմավորված ապրանքներ իրացնելը

1. Ակցիզային դրոշմանիշներով և հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորման ենթակա
չդրոշմավորված կամ չվերադրոշմավորված ապրանքներ իրացնելը, եթե այդ ապրանքների ընդհանուր
արժեքը վաճառողի մոտ նշված (չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված)
գներով կազմում է հիսուն հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկից հազարապատիկի
չափով:

2. Նույն արարքը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (չնշված լինելու
դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով կազմում է հինգ հարյուր հազար դրամ
և ավելի՝

~~պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից հազարհինգհարյուրապատիկի չափով:~~

~~3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են պատասխանատու անձի կողմից՝~~

~~պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկի չափով:~~

Հոդված 219. Ակցիզային դրոշմանիշներով և հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորման կանոնները խախտելը

1. Ակցիզային դրոշմանիշների և հսկիչ նշանների (դրոշմապիտակների) մեկից ավելի անգամ օգտագործման հնարավորությունը չբացառող ձևով կամ դրոշմավորման ենթակա ապրանքները ոչ այդ արտադրատեսակի դրոշմավորման համար տրամադրված ակցիզային դրոշմանիշներով և հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորված կամ Լեռնային Գարաբաղի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ իրացման համար թույլատրելի ժամկետներից հետո դրոշակի թվագրումով դրոշմանիշներով դրոշմավորված, ինչպես նաև դրոշակի տարողությամբ տարաների համար տրամադրված դրոշմանիշներով՝ օրենսդրությամբ չնախատեսված այլ տարողություն ունեցող տարաներով (տուփերով) դրոշմավորված ապրանքներն իրացնելը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով կազմում է հիսուն հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ՝

~~պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկից հազարապատիկի չափով:~~

2. Նույն արարքը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով կազմում է հինգ հարյուր հազար դրամ և ավելի՝

~~պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից հազարհինգհարյուրապատիկի չափով:~~

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են պատասխանատու անձի կողմից՝

~~պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկի չափով:~~

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.	<p style="text-align: center;">Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը</p>
	<p>Քրեական օրենսգրքի 218-րդ (Ակցիզային դրոշմանիշներով և հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորման ենթակա չդրոշմավորված կամ չվերադրոշմավորված ապրանքներ իրացնելը) և 219-րդ (Ակցիզային դրոշմանիշներով և հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորման կանոնները խախտելը) հոդվածներով նախատեսված հանցակազմերն առկա են, երբ դիսպոզիցիայով նախատեսված գործողությունների արդյունքում խախտումը կազմում է 50 000-500 000 ՀՀ դրամ և ավելի, իսկ որպես պատասխանատվության տեսակ բոլոր դեպքերի համար նախատեսված է տուգանքը: Այսինքն՝ օրենսդիրը նշված հանցագործությունների համար սահմանելով քրեական պատասխանատվության ամենամեղմ տեսակը՝ տուգանքը, այդ հանցագործությունները դիտում է որպես նվազ հանրային վտանգավորություն ունեցող:</p> <p>Ավելին, 2019 թվականի հոկտեմբերի 24-ին վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 170.8-րդ հոդվածով արդեն իսկ սահմանվում է վարչական պատասխանատվություն ակցիզային դրոշմանիշներով և (կամ) դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված (չվերադրոշմավորված) ապրանքներն իրացնելու համար:</p> <p>2017 թվականի դեկտեմբերի 21-ին «Ակցիզային հարկի մասին» և «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքներով նույնպես սահմանվում է պատասխանատվություն ակցիզային դրոշմանիշներով և դրոշմապիտակներով դրոշմավորման կանոնները խախտելու համար: Նշված արարքներն իրենց բնույթով հանդիսանում են հարկային պատասխանատվություն ենթադրող արարքներ, այլ ոչ թե քրեական կամ վարչական, հետևաբար վերոգրյալ օրենքներում այդ արարքների համար պատասխանատվության սահմանելն առավել արդարացված է:</p> <p>Նախագծի ներկայացումը պայմանավորված է տնտեսական գործունեության ոլորտում նվազ հանրային վտանգավորություն ունեցող իրավախախտումների ապաքրեականացմամբ, գործարարության զարգացման և խրախուսման անհրաժեշտությամբ:</p>
2.	<p style="text-align: center;">Առաջարկվող կարգավորումների բնույթը</p>
	<p>Օրենսդրության մեջ առկա հակասությունները վերացնելու համար, ինչպես նաև հաշվի առնելով քրեական օրենսգրքի 218-րդ և 219-րդ հոդվածներով նախատեսված արարքների նվազ հանրային վտանգավորության աստիճանը՝ նախագծով առաջարկվում է ամբողջությամբ ապաքրեականացնել վերոհիշյալ տնտեսական հանցագործությունները:</p>
3.	<p style="text-align: center;">Ակնկալվող արդյունքը</p>
	<p>Նախագծի ընդունմամբ կապահովվի տնտեսական գործունեության ոլորտում</p>

	տնտեսվարող սուբյեկտների և պետության տնտեսական իրավաչափ շահերի հավասարակշռած պաշտպանությունը:
4.	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք
	Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի օրենսդրության կատարելագործման բաժնի կողմից:
5.	Նախագծի նորմատիվ բնույթը
	Նախագծի նորմատիվ բնույթը պայմանավորված է նրանով, որ, համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածի, նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի նորմատիվ իրավական ակտով:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ